ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ս. Պ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Արևմտահայ գրող, բանաստեղծ և դրամատուրգ Արմենակ Հայկունու (Համբարձում Ծիզմեճյան) կյանքն ու գործունեությունը անմիջականորեն կապվում են 50—60-ական թթ. արևմտահայ իրականության մեջ տեղի ունեցած քաղաքական և հասարակական մտքի տեղաշարժերի հետ։

Հայկունին արևմտահայ առաջին արձակագիրներից էր, մի շարք ինքնուրույն և թարգմանական պիեսների հեղինակ։ Նրա «Էլիզա» վեպը արևմտահայ գրականության առաջին քաղաքական վեպն է, ուր արտացոլվում է ազատագրական շարժման գաղափարը և գեղարվեստական ձևի մեջ ներկայացվում են հեղինակի հայացքները կրթության, լուսավորության, կրոնի և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ։ Հայկունուն է պատկանում «Մուսայք Մասյաց» հայ առաջին թատերական ամսագրի հրատարակման պատիվը։

1861 թ. Հայկունին մեկը մյուսի ետևից տպագրեց իր բժշկա-բնագիտական բրոշյուրները։ Դրանք չորսն էին՝ «Գարնան ծաղիկներ», «Գաղտնիք բնության», «Գերեզմանք երիտասարդաց» և «Աշնան տերևներ»։ Պատահական չէր, որ այդ գրքույկները բուռն բանավեճ հարուցեցին։ Երևույթը նորություն էր հայ իրականության մեջ։ Այդ մասին «Մեղուն» գրում էր. «Ասոնք հայկական գրականության ասպարեզին մեջ գրէթե նոր ու առաջինն են, բայց այսպիսի գրյանց օգտակարությունը միշտ անուրանալի է. քանզի առողջությունն ու երջանկությունը գլխավորապես ատ տեսակ գիտություններեն կախում ունին»[1]։

Նույնանման կարծիք էր հայտնում նաև «Պեզասյան թռչնիկը». «Զավակաց մատակարարվելիք ճշմարիտ կրթությունը զանոնք կատարելապես մարդասիրական և ընկերասիրական սկզբունքներով զարթելու և երկրիս ու մարդկային դրության վերաբերյալ ամեն գիտությանց տեղյակ ընելու մեջ ցկայանա...»— գրում էր նա[2]։

Ազգի երջանիկ ապագան նույն ազգի քաղաքակրթության մեջ է, գրում էր «Զեփյուռ Հայրենյացի» երիտասարդ խմբագիր Հ. Գափամաճյանը։ Այն ազգը, որը հետամուտ է քաղաքակրթության՝ բարի ու երջանիկ ապագան պատրաստ է նրա համար։ Եվ ի՞նչ է քաղաքակրթությունը, հարցնում էր նա, եթե ոչ լուսավորություն, «որ գիտությամբ կրնա ստացվիլ միայն՝ որոնք ընդհանրապես բնության գաղտնյացն ու օրինացը վրա կճառեն...»[3]։ Առաջադեմ միտքը բարեմաղթում ու քաջալերում էր հրատարակությունները։ Իզուր չէր «Մեղուն» գրքույկները ոմանց համար համարում գարնան ծաղիկներ, իսկ ոմանց համար՝ չոր փշեր։ Հին սերունդը քարոզում է «կեղծ բարեպաշտություն», նոր սերունդը պահանջում է իսկական քաղաքակրթություն, հինը ծածկում է իրականության դեմքը, նորը՝ մատնանշում հասարակության տգիտությունը, լուսավորության և առաջընթացի համար պահանջվող բանիմացությունը՝ կյանքի այլևայլ բնագավառներում։

Հիշյալ գրքույկների մեծաթիվ վաճառքը «անշուշտ ժողովրդյան, չափազանց ընթերցասիրությունը չէր,—նշում էր «Մեղուն»,—այլ նյութերու պիտուականությունը և գրքերուն ազդեցությունն է որ ինքզինքը ծախել կուտա...»[4]։ Այդ էր վկայում նաև հրապարակախոսի գրքույկների թուրքերեն թարգմանության փաստը[5]։

Հայկունու գրքույկներում արծարծված հարցերը կապված էին բնության և մարդու, կյանքի և առողջության վերաբերյալ այն նոր հայացքների հետ, որ մշակել էր հրապարակախոսը տիրապետող մտայնությանը հակադրվելով։

Ճիշտ է, նրա ունեցած բժշկա-բնագիտական տեղեկությունները դեռ տարրական են, բայց և այնպես ավանդական միջնադարյան գաղափարախոսության բացասման կռվան են ծառայում։

---

1 «Մեղու», 1863, № 205։

2 «Պեզասյան թռչնիկ», 1863, № 12։

3 «Զեփյուռ հայրենյաց», 1863, № 27, էջ 213։

4 «Մեղու», 1863, № 209, էջ 211։

5 Նույն տեղում, № 217, էջ 280։

XIX դարի կեսերին հայ կյանքում կրոնական կաշկանդումները թեև զգալի էին, բայց նոր իսկզբի և մտածողության առաջխաղացումը նկատելի էր։ Զարգացող իրադրության մեջ զգացվում էր տեսական մտքի պակաս և, հատկապես, աշխարհընկալումը կրոնական պատանքից ազատագրելու ճիգ։ Կրոնական-աղանդավորական մտածողության հաղթահարումից հետո միայն պետք է դրվեր կյանքի վերանորոգման մյուս արմատական խնդիրների լուծումը։

Սա սկիզբ դարձավ մի սուր ու համառ բանավեճի, որ սկսվեց «Երևակի» ու «Ժամանակի» կողմից՝ ընդդեմ Հայկունու և մեղվականների։ Բնության և մարդու վերաբերյալ նոր հայացքների գիտական ըմբռնումները ոտքի հանեցին ամբողջ կղերամիտ բանակը։ Հնօրյա «պատվելիի» և նրա փիլոնավոր համախոհների դեմ Հայկունին դուրս եկավ ամենայն վճռականությամբ։

Համառ էր «Ժամանակ» հանդեսի պահպանողական խմբագիր Ս. Փափազյանի պայքարը Հայկունու դեմ։ Նա «Ժամանակ»-ում հանդես եկավ մի ընդարձակ հոդվածով, որով քննադատում և կասկածի տակ էր առնում հրապարակախոսի մտքերը՝ բնության երևույթների մասին։ Երիտասարդ Հայկունին լիբերալների պարագլխին պատասխանում է «Ճերմակ կամ պ. Փափազյան և յուր ժամանակը» դրքույկով։ Բնության գաղտնիքների և աշխարհաճանաչության նոր պատկերացումների շուրջը տարվող այս բանավեճը առաջին գծի վրա մղեց կրոնի խնդիրը։ Ավելի հիշտ, այն դարձավ Հայկունի-Փափազյան պայքարի միջուկը։

Այդ նույն տարիներին Հայկունին աշխատակցում էր Գրիգոր Ալեքսանյանի խմբագրությամբ հրապարակվող «Պեղասյան թռչնիկին»։ Լիբերալ այս հրատարակության էջերում Հայկունու հանդես գալը շատ կարևոր երևույթ էր։ Զափավոր հայացքների տեր խմբագրին, որը որոշ հարցերում համերաշխում էր պահպանողական կողմին, չէին կարող չանհանգստացնել կրոնի ու ազգային կյանքի վերափոխություն քարոզող աշխատակցի պահանջները։ Հայկունու նյութերը՝ ուղղված ազգային-պահպանողական օրգանների դեմ, սարսափեցնում էին պարբերականի խմբագրին։ Սրա էջերում 1863 թ. լույս է տեսնում Հայկունու «Ամուսնական» հոդվածաշարը։ Հրապարակախոսը այստեղ մեկ առ մեկ նշում էր կրթության, դաստիարակության և ամուսնության խնդրում ծնողների ունեցած դերը։ Հայկունին դեմ էր ծնողների ինչպես «բռնավորական իշխանությանը», նույնպես և անտարբեր «անհոգությանը»։ «Որ և իցե մեկը,— գրում էր նա,— որ ծնողական անիրավ իշխանության պատճառով ամուսնացյալ է իրեն պիրելի շեղոզի մը հետ, մեծ իրավունք ունի անկից բաժնվելու և անհավատարիմ լինելու, առանց ամենևին խորհելու թե սովորությունը, քաղաքականությունը և կրոնքը ի՞նչ կըսեն...»[6]։ Ամուսնությունը կրոնական և հասարակական կապանքներով սեղմող այդ դարում Հայկունու մտքերը չափազանց համարձակ էին։ Նա քարոզում էր մի կողմից բարոյական նոր նորմեր, որոնք համապատասխան էին ժամանակաշրջանի ոգուն, իսկ մյուս կողմից խարազանում ավատական մտայնության վրա հիմնված և իր ժամանակն արդեն ապրած բարոյական ըմբռնումները, երիտասարդության կրթության հնավանդ ուղիները, եկեղեցական սխոլաստիկ դաստիարակությունը։ «Ճշմարիտ կրթությունը,— գրում էր նա,— ...մարդասիրական և ընկերասիրական սկզբունքներով զարթելու և երկրիս ու մարդկային դրության վերաբերյալ ամեն գիտությանց տեղեկանալու մեջ կկայանա...»[7]։

Հայկունին գիտեր, թե ինչ աղմուկ են բարձրացնելու այս տողերը կղերամիտ և պահպանողական շրջաններում. «...Մենք այս նյութիս վրա թեև կրնայինք ավելի ընդարձակ և ավելի մանրամասն կերպով գրել, սակայն լավ վերահասու լինելով ազգային մտավորական ետադիմությանը չուզեցինք առ այժմ ամեն բան բացահայտ խոսելու...»[8]։ Ջուշացան հոգևոր դասի և նրա հովանավորությամբ գործող ազգային իշխանությունների հարձակումները։ «Քանի մը խոսք «Պեղասյան թռչնիկ» 12-րդ թվույն վրա» հոդվածով «Ժամանակ»-ում հանդես եկավ հանդեսի պահպանողական խմբագիր Ս. Փափազյանը։ Կրոնի ամենակարող ուժը ժխտող հրապարակախոսի մտքերը ապշեցնում են «Ժամանակ»-ի խմբագրին, որը նույնիսկ չէր ուզում հավատալ, թե այդ տողերի հեղինակը Հայկունին էր. «Վասնզի,— գրում էր նա,— Պեպեքի բողոքականաց դպրոցին մեջ իր դաստիարակությունը առնող պատանիե մը եթե ոչ պաշտպանություն Հայաստանյացս Ս. եկեղեցվո ուղղափառությանը՝ գեթ քրիստոնեական Ս. կրոնի դեմ հարձակմունք չէինք սպասեր»[9]։ Հոդվածագիրը սկզբում այդ համարում էր անզգուշություն, «սակայն,— բացատրում է նա,— հոդվածին հեղինակը անձամբ տեսնելով՝ երբ բացատրություն խնդրեցինք իր հոդվածին վրայոք, ցավոք սրտի նկատեցինք, որ կատարելապես կբացատրե ինչպես որ չէինք կարծեր, և սրտի ցավ մ'ալ

6 «Պեղասյան թռչնիկ», 1863, № 8, էջ 63։

7 Նույն տեղում, 1863, № 12, էջ 94։ Ա. Հ. Ամուսնական։

8 Նույն տեղում. էջ 95։

9 «Ժամանակ», 1863, № 16, էջ 124։

նկատեցինք վրան, որ կարող չէ համարձակ իր սկզբունքները հրատարակել, և մարդկային ազդը փրկել այնպիսի նախապաշարմունքե մը, որ հավիտենականության ցնորքով մը՝ երկրիս մեջ զանազան երանություններ վայելելե զրկված է»[10]։

Լինելով մարտնչող հրապարակախոս և պաշտպանելով այն դասի իրավունքները, որի ներկայացուցիչն էր ինքը, Հայկունին, ազգային հարաբերությունների զարգացման այս շրջանում, դիմադարձ էր կղերապահպանողական կողմին և համարձակ կերպով շարադրում էր իր դավանած սկզբունքները. նրա առաջադրած գաղափարների բուն բովանդակությունը կապվում էր դարակեսին ձևավորվող ազգային ինքնուրույն մտայնությանը նպաստող ու այն նախապատրաստող գաղափարարանության հետ։ Իր էությամբ այդ գաղափարաբանությունը օպոզիցիոն դիրք էր գրավում կղերա-աղայական և ազգային պահպանողական դասի նկատմամբ, որքան էլ որ ընդուներ կրոնն սուեղծող արարչի գոյությունը։ «Վերջապես եկած հասած է ժամանակը,— գրում էր Հայկունին.— որ մենք ազատիմք ալ այն կեղծ ու շինծու ամոթխածութենեն, որ մեր աճումը վիրավորած և հարազատ անմեղությունը կիրպարանափոխ ըրած է, բավ եղավ ալ մարդկային ընկերության կրած վնասները, այս անհարազատ պարկեշտութենեն, որ կթողու ախտերուն զարհուրելի կերպարանքները ուզած աստիճաններուն հասնելու, և փոխանակ զանոնք երևան հանելու և անոնց դարմանները գտնելու, կստիպե զմեզ զզվանոք երես դարձնել անոնցմե»[11]։ Նոր զարգացող բուրժուական բարքերը որոշակիորեն ցուցադրվում էին իրենց բարոյական սնանկությունը։ Այդ հասարակակարգի քաղաքակրթության վնասները ու չարիքը երիտասարդության ցոփ ու շվայտ կենցաղում՝ հրապարակախոսի կողմից ներկայացվում են իրենց իսկական տեսքով և հետևանքներով։

Հայկունին լավ դիտեր, որ շատերը կդատապարտեն և «ծուռ մեկնություններ» կտան իր աշխատություններին։ Պատմության մեջ գիտության բոլոր առաջամարտիկները դատապարտվել են, այրվել են ու աքսորվել։ «Ուստի մենք,— գրում է Հայկունին,— որ նոր գտում մը հրատարակելու ձևոք չենք զարկած, այլ միայն մենե շատ լուսավորյալ և բարեկարգյալ ազգաց մեջ միլիոնավորներով հրատարակված... գիտության վրա պիտի խոսիմք, ամենևին փույթ չեսք կրնար ընել թե որ խել մը գլուխներ խոժոռին մեզ դեմ, դատապարտեն մեզ և մեր աշխատասիրությունը...»[12]։ «Կգտնվին անձինք, որոնք սնոտի զգուշավորությամբ կձգտեն, որ հասարակությունը, որքան հնարավոր է, տգետ մնա յուր բարելավություններ»։ Բավական է, այլևս, որ խավարում տեղի ունեցող «զազրաղործություններեր» հասարակության մեջ չհիշվեն և այդ մասին չդրվի։ Հասարակությունը պետք է տեղյակ լինի դրանց հետևանքներին։ Մարդակազմության բոլոր օրենքները չպետք է դատապարտվեն կամ մերժվեն, «վասն զի... բնության ձայնը մեր լռութենեն զորավոր է»,— հիշեցնում էր երիտասարդ հրապարակախոսը։

Առաջադրելով մարդկային առողջ մարմնի պահանջը, Հայկունին մերժում է նախապաշարված տգիտությունը, որով և նպաստում է կյանքի նկատմամբ ռեալիստական աշխարհայեցության կազմավորմանը։ Համլինյան ուսումնառության տարիներին նա ծանոթացել էր եվրոպական առաջավոր բնագիտական մտքի նվաճումներին՝ օրգանիկմի կազմությանը, բջջային տեսությանը, Դարվինի ուսմունքին, նյութափոխանակությանը և այլն։ Սա հնչտացրեց 60-ական թթ. նրա հայացքների շրջադարձը։ Հայկունու միտքն ուղղվում էր արևմուտքի առաջավոր հասարակական մտքի կողմը, հենվում համաշխարհային գիտության նվաճումների վրա[13]։ Նա նշում էր տեսական ու գործնական այն միջոցները, որ ընձեռում էր գիտությունը՝ հասարակությունն ապականող աղետներից մաքրելու և մարդկանց ֆիզիկական բարեկեցությունը հասցնելու համար։

Հայկունու կարծիքով մարդկային կազմության, նրա ֆիզիոլոգիայի օրենքները չունեն միստիկական բնույթ։ Դրանք բոլորն էլ բնական օրենքներ են՝ համընդհանուր և օբյեկտիվ։ Մարդն ինքը բնության մի մասնիկն է և ամբողջովին ենթարկվում է նրա ներքին օրինաչափություններին։ «Պետք է գիտենալ,— գրում էր հրապարակախոսը,— թե բնության մեջ գտնված ամեն օրենք տիեզերական է, և բնությունը չունի այնպիսի օրենք մը, որ մասնավոր լինի, ամենաստորին ճրճիներեն սկսյալ մինչև մարդս միևնույն օրենքներով կսնի կապրին, կծնանին կամ կմեռնին...»[14]։ Մարդկային ցեղը, որպես նույն տիեզերքի բաղկացուցիչ մի մասը, ենթարկվում է նույն օրենքներին՝ կյանքում հավերժորեն գործող զարգացման և բազմացման կանոններին։ Եվ գիտությունը-

10 Նույն տեղում։

11 «Գերեկմանք երիտասարդաց», Պոլիս, 1882, էջ 5։

12 «Գաղտնիք բնության», Պոլիս, 1863, առաջաբան, էջ 2։

13 Նույն տեղում, էջ Բ։

14 «Գաղտնիք բնության», Յառաջաբան, էջ Դ։

ներն են միայն, որ մարդուն ծանոթացնում են բնության գաղտնիքներին[15]։ Բնության երևույթների այսպիսի ըմբռնումը, թեև նաիվ իր ձևի մեջ, այնուհանդերձ ի հայտ էր բերում մի գաղափարական ելակետ, որն իր բնույթով հակադրվում էր աշխարհի և մարդու վերաբերյալ տիրապետող կրոնա-միստիկական պատկերացումներին և չափազանց համարձակ էր հնչում ժամանակի իրականության մեջ։ Այդ ուսմունքների բավական մանրազնին ուսումնասիրությունը Հայկունուն տվեց աշխարհի ավելի ճիշտ և նոր պատկերացում։

Հայկունու այդ շրջանի (1862—66 թթ.) գործունեությունը քննելիս պարզ է դառնում, որ հրապարակախոսի հայացքները կրոնական-ավանդական մտածողությունից զարգանում են դեպի արմատական դեմոկրատիզմի դիրքերը։ Կրոնական աշխարհայեցությունը, որն այնքան ամուր պատվաստված էր նրա մոտ մանկությունից ի վեր, տեղի է տալիս դեիզմին։ Հրապարակախոսի պայքարը մարդու մտավոր և հասարակական-քաղաքական ազատության համար առաջին հերթին ուղղվում էր միջնադարյան սխոլաստիկ մտածողության դեմ։ Մարդը դտնվում է երկրի վրա և հենց այդտեղ էլ պետք է որոնի իր բարօրության և դժբախտության պատճառները, բնության երևույթների ուսումնասիրության մեջ որոնի բարօրության հասնելու միջոցները։ «Փորձառությունն. ալ համոզեց աշխարհս,— գրում էր նա,— թե լոկ կրոնասիրությունը միմիայն հանդերձյալ կյանքի մեջ երջանկություն մը ձեռք բերելու համար գրեթե տրված պարտավորություն մի է, և այս աշխարհիս մեջ մեր անցնելիք օրերու համար օգուտ մը չի կրնար ունենալ, և ոչ ալ կրնա հոս մեզ երջանիկ ընել...»[16]։

1863 թ. գրած այս տողերը հաստատում են Հայկունու անցումը կրոնից դիտության դիրքերը։ Կրոնը դիտելով որպես «նախապաշարմունք», Հայկունին փորձում էր խորանալ բնության օրենքների, բնական դիտությունների իմացության մեջ, ընդ որում, գտնելով, որ բնության օրենքների և հարաբերությունների այդ իմացությունը դեռևս չի նշանակում ժխտել արարչի գոյությունը։ Նա, մի կողմից, աստծո գաղափարը հեռացնում էր բնության օրենքների ամենակարող ուժով, բայց և այդ օրենքները հաստատում «վերին տեսչության» անդիմադրելի և անփոփոխելի կամքով։ Այնուամենայնիվ, մարդկային ցեղի առաջընթացը, նրա երջանկությունը Հայկունին կախված էր համարում «բոլոր այն դիտություններեն ու ուսմունքներեն, որ բնության կվերաբերին...»։ Շատերը առողջ և երկարակյաց կլինեին, եթե ծանոթ լինեին մարդակազմությանը, կամ վաղաժամ ամուսնության պատճառած վնասներին։ «Սիթե բնական գիտության շնորհիվն չէ՞ որ երկրագործության, հանքարանության, մաթեմատիկական գիտության միջոցով խել մը երջանկություններ կվայելե մարդս...»[17]— գրում էր նա։

Հայկունին խորապես ըմբռնել էր գիտության «ամենազորությունը», մարդկության առաջընթացը դյուրացնելու նրա ընձեռած բազմաթիվ հնարավորությունները։ Նա միաժամանակ փորձում էր համոզել, որ գիտությունը ոչ մի կապ չունի աստծո հետ և ամենևին կասկածի տակ չի դնում նրա գոյությունը։ Բնության օրենքների իմացությունը այլ բան չէ, քան հասարակական նոր հարաբերություններով պայմանավորված մտավոր զարգացման պրոցես։ «Մարդկային որ և իցե ընկերություն,—գրում էր նա,—որ կուզե լուսավորվիլ և ոյս աշխարհիս մեջ երջանիկ լինիլ պարտի բնության ամեն օրենքներուն և մարդկային կազմությանն սույն օրինաց հետ ունեցած հարաբերությանց տեղյակ՝ և ընկերական պարտավորությանց լավ վերահասու լինիլ։ Մարդս աշխարհ եկած չէ ոոն հանդերձյալ կենաց համար տանջվելու, այլ այս կյանքս ալ շատ երանություններ ունի որ վայելելու է»[18]։ Հայկունին քննադատում է կրոնը, բացահայտում կրոնական աշխարհայեցողության անհեթեթությունները, բայց միաժամանակ բնությունից դուրս տեսնում է արարչին, որը անմեկնելի և անքննադատելի է իր բարձրության վրա։ Նա մեկ հայտարարում է, որ մարդկային բարօրության և փրկության միակ ելքը գիտության նախանշած միջոցներն են և այդ է մարդկային հասարակության զարգացման ճշմարիտ և միակ ուղին՝ ունենալով այն համոզումը, որ կրոնական ջերմեռանդությունը անկարող է օգնել մարդկությանը, մեկ էլ բնության երևույթների գիտական բացատրության կողքին ընդունում է ստեղծագործ արարչի գոյությունը։ Ելման կետը, այնուամենայնիվ, դառնում է արարիչը։ «Որքան տարապայման հիմարություն է բոլոր այս խորհրդավոր տիեզերագործության մեջ,—հայտարարում է նա,—Արարիչ մը չի տեսնելը. խորհող արարիչ մը... երկրպագելի արարիչ մը»[19]։

---

15 Նույն տեղում, էջ Լ։

16 «Պեզասյան թուղթիկ», 1863, № 12, էջ 94։

17 «Ճերմակ կամ պարոն Փափազյան ու յուր ժամանակը», Առաջարան. Պոլիս, 1863, էջ 8։

18 Նույն տեղում, էջ 3։

19 «Գաղտնիք բնության», էջ Ն։

Հեռանալով կրոնական գաղափարից, բարոյախոսությունից, Հայկունին մարդկային երջանկության և բարոյականության ակունքը փնտրում է երկրի վրա։ Նա հայտարարում է. «Մարդկային բարոյականությունը երրեք կրոնքե ծագումն առած չէ»[20]։ Փափազյանի այն թեզին, թե «Ճըշմարիտ բարոյականության հիմը քրիստոնեության ճշմարիտ կրոնի վրա հիմնյալ է, և այս ճըշմարիտ կրոնքեն կաղրերանա բարոյականությունը»[21], Հայկունին պատասխանում է՝ «բարոյականությունը մարդու նախնական և անբաժանելի մեկ հանգամանքն է»։ Իսկ եթե հրաժարվենք ընդունելու այդ, ապա պարտավոր ենք քրիստոնեությունից զատ մնացած բոլոր կրոնները «իբրև աստվածային հայտնություն» ընդունել, որովհետև աշխարհում գոյություն ունեցող բոլոր կրոնները զրեթե միևնույն բարոյականությունն են պահանջում իրենց հավատակիցներից։ «Պարսիկք, հույնք և ամենայն ազգք հեթանոսաց առանց այլ օրինաց իրաւունս դատաստանի կատարեն ի պատել զբարեգործ և ի պատժել զչարագործս»,— գրում էր Հայկունին, մեջ բերելով «Հաճախապատումի» խոսքերը[22]։ Հայկունին կարծում էր, որ կրոնի պաշտոնը միմիայն բարոյականության պաշտպանությունն է, սակայն կրոնը չի կատարում իր պարտավորությունը։ «Աշխարհիս պատմությունը երբ լավ մը աչքե անցնենք,— գրում է Հայկունին,— կտեսնենք որ կրոնքը յուր նպատակին չը կրցավ հասնիլ»[23]։ Որովհետև այն, կղերականների ձեռքը ընկնելով, այնպես այլակերպվեց, որ օգուտից ավելի վնասակար եղավ մարդկային բարոյականությանը[24]։ «Բարոյականություն ըսածդ նոցա համար քսանվեց գլխով սատանա է»։ «Կղերը մարդկության ամենամեծ թշնամին է...»— գրում էր նաև Հայկունին նկատում է, որ կրոնի բարոյականություն սերմանող թեզերը այնքան հնացած են և անբզտակար, որ այսօր տիրող այլանդակ բարոյական բարքերի պատճառը դառնում է կամ կրոնը և կամ կղերը։

Բայց Հայկունին բարոյականությունը չէր պայմանավորում հասարակական միջավայրի և և իշխող հանրակարգի հանգամանքներով։ Մարդու բարոյական նկարագիրը նա բխեցնում էր անձի ներքին բնությունից ու համոզումից՝ չըմբռնելով, որ միջավայրի և տիրող հասարակարգի վերափոխումը կփոխեր նաև իշխող բարոյական նորմերը՝ ստեղծելով նոր պայմաններ բարոյական կյանքի համար։

Ուշագրավ է Հայկունու բացահայտ բողոքը հնօրյա ազգայնամոլների մարդատյաց թեզերի դեմ։ «Կրոնասիրությունը մարդս մարդատյաց կընե»— գրում է Հայկունին, ռեակցիոն այդ մտայնությունը կապելով կրոնական տարբեր գաղափարախոսությունների հետ։ «Կրունքը չէ՞ որ մեր արտին մեջ մեր եկեղեցվո ընդունածեն բան մը պակաս հավատացող ուրիշ ազգաց վրա թշնամություն կհարուցանե, միայն կրոնասիրությունն չէ՞ր, որ հրեաները դատապարտյալ, մահմետականները հեթանոս, Հռովմեականները նեռադավան, Բողոքականները աղանդավոր ճանչցուց մեզ... մեր կղերը չէ՞, որ միայն կրոնասիրությանց կրթնած շարունակ կքարոզե մեզ, թե բացի յուսավորչական եկեղեցիին հետևողներեն՝ ուրիշ ամեն ազգերն և տարբեր կրոնական դրությանց հետևողներուն ծուռ նայինք՝ որ ամենեին վայել չէ մարդկության. միայն կրոնասիրությունը չէ՞ր, որ Քրիստոնյա աշխարհս մահմետականության թշնամի ըրավ...»[25]։

Չնայած այս բոլորին, Հայկունին հայտարարում է, որ ինքը հարգում է ինչպես կրոնը, նույնպես և նրա պաշտոնյաներին։ Եվ թող իր այս բացատրությունները հիմք չտան պարոն Փափազյանին իրեն անկրոն հռչակելու, որովհետև «եթե ես անկրոն եմ,— գրում է նա,— ի՞նչ կարևորություն ունիմ կրոնի պաշտոնյաներուն պարտաղանցություններուն դեմ բարկանալուս։ Հայկունու պամֆլետի եզրափակիչ այս խոսքերը ունեին որոշակի իմաստ և նպատակ։ Նա լավ հասկանում էր, որ շրջապատի հետամնաց միջավայրում, նախապաշարված ժողովրդի մեջ անկրոն մարդու խոսքերը ոչ ոք չէր լսի։ Մյուս կողմից «ռացիոնալիստական» այս դեիզմը խավարամոլների հետապնդումից խուսափելու համար ձև էր։

Մեծագույն արժանապատվությամբ և մարտական խիզախությամբ գրված Հայկունու պամֆլետին Ս. Փափազյանը պատասխանեց «Պարոն Ա. Հայկունին և յուր ճերմակը» հոդվածաշարով։ «Ժամանակ»-ի վիրավորված խմբագիրը, Հայկունու գրքույկներում շոշափված «կասկածելի» թեզերի հիման վրա, փորձում էր հիմնավորել հրապարակախոսի անաստվածությունն ու անկրոնությունը։ Նա Հայկունուն համարում էր «այն սև հոգիներեն», որոնք «անդադար կմարտնչին աստծո

20 Նույն տեղում, էջ 11։

21 «Ժամանակ», 1863, № 19, էջ 152։

22 Նույն տեղում, էջ 13։

23 «Ճերմակ կամ պարոն Փափազյան», Առաջաբան, էջ 16։

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում, էջ 18։

եկեղեցվույն դեմ»26։ Կղերա-աղայական և ազգային պահպանողական բանակները իրենց բոլոր ուժերը ոգեկոչեցին այդ նորելուկ «աթեիստին» մեկընդմիշտ լռեցնելու համար։ «Ժամանակ»-ը հրատարակում է Շաթոբրիանի «Անաստվածությունը վտանգավոր և անօգուտ է» հոդվածաշարը, «Երևակը» «խորհուրդ գաղտնի ընկերության» դիրքը։

Բայց Հայկունուն ընկճելը այնքան էլ հեշտ չէր։ Բացառիկ անձնազոհ այս մարդուն չէին հուսահատեցնում ոչ կղերական-պահպանողական բանակի և ոչ էլ լիբերալ ազդեցիկ սահմանադրականների ելույթներն ու բանսարկությունները։ Նա անվհատ շարունակում էր իր գործն ու միայնակ դիմագրավում հակառակորդների հարվածներին։ Հայկունու համոզմունքները աներեր էին։ «Զայնի» համարներից մեկում նա տպում է իր ծաղրանկարը և տակը գրում՝ «Արմենակ Հայկունի Ճիզմեճյանի երկու ոտքը մեկ ճիզմեի մեջ է, ոակայն, չպիտի դաղարի ծայն հանելու՝ մին-և որ կոկորդը պատռվի»27։

Իսկ ինչո՞ւ էր Հայկունին նախընտրում կյանքի այդ դժվարին ու քարքարոտ ուղին։ Ի՞նչն էր ստիպել նրան իր երերուն սոցիալական դիրքով ու համեստ խմբագրի կամ ուսուցչի վիճակով նետվելու վտանգավոր բանավեճերի թոհուբոհի մեջ՝ դեմընթաց ամենազոր հակառակորդներին։

Հայկունուն անհանգստացնողը հարազատ ժողովրդի ճակատագիրն էր։ Հանդես գալով նոր երևույթներով հարուստ մի ժամանակաշրջանում, նա անվարան կերպով փորձում էր բացահայտել նորի, առաջավորի իմաստը՝ դրանով իսկ հակադրվելով հնացած ու իր դարն ապրած հասկացություններին, ծառայելով իր ժողովրդի կրթական, լուսավորական առաջընթացին։

---

26 «Ժամանակ», 1863, № 16։

27 Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Պոլիս, էջ 241։